

# ՃՈՄՊԼԱԹ ԿԸ ՎԵՐՅԻՇԵՑՆԷ...

«Ալ Անպա» օրաթերթին երեկուան համարով լոյս ընծայուած իր յօդուածին մէջ Ուալիտ Ճոմպլաթ վեր կ'առնէ Ընկերավար Յառաջդիմական կուսակցութեան պայքարով լեցուն պատմական անցեալը, աւելցնելով, որ պայքարը կը շարունակուի տակաւին:

Ճոմպլաթ կը վերոյիշեցնէ Թայէֆի համաձայնագիրին մէջ կշռուած Ծերակոյտի մը կազմութեան անհրաժեշտութիւնը: Ան կը մտադրէ, որ Մայիս 7-ի տարելիցը, անցեալի սխալները վերանայելու առիթ մը կ'ըլլայ ընդդիմութեան համար: Այս առիթով, Ճոմպլաթ պահանջեց քաղաքական դաւաճանքայնութիւնը ջնջելու յանձնախումբի մը կազմութիւնը:



## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՅԱՄԻ ՅԱԶՈՐԴ ՄՐՅՈՒՄԸ ՄԱՅԻՄ 9-ԻՆ

Աշխարհի EE-EU բռնցքամարտի ախոյեան հայազգի Ալեքսանդր Արայամ, Մայիս 9-ին, երկրորդ անգամ ըլլալով պիտի պաշտպանէ ախոյեանի իր տիտղոսը:

Արայամի մրցակիցը պիտի ըլլայ 25-ամեայ Մակոմետ Ապտուախամանովը: Վերջինս, արհեստավարժ դառնալէ ետք կատարած է 16 մրցում եւ արձանագրած է 14 յաղթանակ:

## ՌՈՆԱԼՏՕ ՀԱՍՈՉՈՒՄԸ Է, ՈՐ ԹԵՎԷՉ ՊԻՏԻ ՉԼԷՒ ԵՈՒՆԱՅԹԸՍԸ

Մանչեսթըր Եունայթեդ-տի եւ Փորթուգալի ազգային խումբին յառաջապահ Զորիսթիանո Ռոնալտո համոզուած է, որ Գարլու Թեվեզ պիտի չլքէ Օլտ Թրեֆորտի ակումբը: Ռոնալտոյի կարծիքով, Ալեքս Ֆերկըսըն պիտի չուզէր իրաժարիլ իր լաւագոյն ֆուլթայլիստներէն:



Բրիտանական մամուլին համաձայն, Լիվըրպուլ սկսած է որոշ հետաքրքրութիւն ցուցաբերել Թեվեզի համար, որ շատ յաճախ ելոյթ կ'ունենայ Մանչեսթըրի պահեստայիններէն: Միւս կողմէ, Մանչեսթըր Եունայթեդ լծուած է Գարլու Թեվեզին փոխարինող մը գտնելու փնտրութեան: Ալեքս Ֆերկըսընի կարծիքով, Թեվեզ կողմէն կարող յառաջապահ մը չէ: Ֆերկըսըն ներկայիս կը հետապնդէ Լիոնի եւ Ֆրանսայի ազգային խումբին 21-ամեայ յառաջապահ Զարիմ Պեքեման, որուն համար կ'ըլտէ, թէ պատրաստ է վճարելու 30 միլիոն սթերլինի գումար մը:

## ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻ ԿԸ ՅԵՏԱՊՆԴԷ ՏԱՎԻՏ ՎԻԼԻՍ

Անգլիոյ Բարձրագոյն Խումբի Մանչեսթըր Սիթի ակումբը այժմէն իսկ լուրջ նախապատրաստութիւններու լծուած է յառաջիկայ մարզական տարեշրջանին համար:



Սիթիի պատասխանատուները 35 միլիոն սթերլին վճարելու պատրաստակամութիւն յայտնած են սպանական Վալենսիա ակումբին, յառաջապահ Տավիտ Վիլայի ստորագրութիւնը ունենալու նպատակաւ: Վալենսիա, ներկայիս կը գտնուի տնտեսական լուրջ դժուարութիւններու առջեւ եւ մտադրած է վաճառել միւլեոյն՝ Տավիտ Սիլվա անունազանաւորով երկու ֆուլթայլիստներէն առնուազն մէկը, յառաջապահ Տավիտ Սիլվան՝ 27 տարեկան կամ 23-ամեայ միջնապահ Տավիտ Սիլվան: Վերջինիս միաժամանակ կը հետապնդեն Պարչելոնան եւ Ռեալ Մատրիդը:

Բրիտանական մամուլին համաձայն, Մանչեսթըր Սիթի ակումբին սեփականատէրերը պատրաստ են 128 միլիոն սթերլին վճարելու յետապահ Ֆապիօ Գանալարոյի եւ յառաջապահ Տավիտ Սիլվայի համար:

**Կ'ՈՒԶՈՒԻ**  
Kodak Յաստատութիւնը կարիքը ունի electronic ուսանած երիտասարդի մը: Գետաքրքրուողները կրնան հեռագրել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին: [kanekour@dm.net.lb](mailto:kanekour@dm.net.lb)

## ՀԻԼԸՐԻ ԳԼԻՆԹԸՆ ԶՎՓԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Գըլինթըն յայտարարեց, թէ չափաւորականութիւնը կը մնայ Լիբանանի լաւագոյն ընտրանքը: Նիւ Եորք Թայմզ օրաթերթի լրագրող Մարք Լենտլըրի հետ ունեցած իր հանդիպումին ընթացքին, Գլինթըն ընդգծած է, որ Ուաշինկթըն ոչ մէկ համաձայնութիւն պիտի կնքէ Լիբանանի հաշտոյն՝ շրջանային այլ պետութիւններու հետ եւ ամերիկեան դիւանագիտութիւնը կը փափաքի Միջին Արեւելքի մէջ տեսնել՝ ազատ, գերիշխան Լիբանան մը:

### ՉՕՐԱՎԱՐ ԳԱՀՈՒՄԸԻ ԸՆԴՈՒՆՆԵՑ ՉԵՔԻՆ

Լիբանանեան բանակի ընդհանուր իրաւաստար զօրավար ժան Դահուաճի Եարզէի մէջ ընդունեց Լիբանանի մօտ Պաղեստինի դեսպան Ապպաս Չեքին եւ անոր հետ քննարկեց պաղեստինեան գետնի իրավիճակը:

## ՓՈՐԹՕ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ ՏԻՏՂՈՍԻՆ

Շաբաթավերջին տեղի ունեցան երրորդական երկիրներու ազգային ախոյեանութեանց հերթական հանգրուանի մրցումները: Իտալիոյ մէջ, ախոյեանութեան 34-րդ հանգրուանի մրցումներուն գծով Ա. Սէ. Միլան արձանագրեց յաջողական իր 5-րդ յաղթանակը, երբ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Գաթանիան: Դասաւորման պարագլուխը՝ Ինթեր Միլան միւլեոյն՝ 2-0 արդիւնքով կարելու յաղթանակ մը արձանագրեց Լացիօ Ռոմայի դէմ:

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Ինթեր Միլան՝	77 կէտ	(60-25)
2. Ա. Սէ. Միլան՝	70 կէտ	(64-29)
3. Եուվեթաուս՝	66 կէտ	(61-34)

Սպանիոյ ախոյեանութեան 34-րդ հանգրուանի մրցումներուն, Պարչելոնա ֆուլթայլի գեղեցիկ դաս մը տուաւ Ռեալ Մատրիդին, երբ այս վերջնային դաշտին վրայ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց մայրաքաղաքի կազմը:

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Պարչելոնա՝	85 կէտ	34 մրց.	(100-28)
2. Ռեալ Մատրիդ՝	78 կէտ	34 մրց.	(79-41)
3. Սելիլիա՝	60 կէտ	34 մրց.	(48-38)

Փորթուգալի ֆուլթայլի ախոյեանութեան 27-րդ հանգրուանի մրցումներուն գծով, Փորթոյի կազմը քայլ մը եւս մօտեցաւ ախոյեանութեան տիտղոսին երբ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆոնշալը:

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Փորթո՝	63 կէտ	27 մրց.	(55-16)
2. Սփորթինկ Լիզպոն՝	57 կէտ		(38-17)

## ՄԱԿԱՐԱՆ

	Գնման Սակ	Վաճառման Սակ
Սուրիական թղթոսկի	31,40	31,65
Քուէյթեան տիւար	5125	5150
Յորդանանեան տիւար	2100	2125
Պահրէյնեան տիւար	3955	3980
Ա. Մ. Էմիրութեանց տիրիւմ	407	409
Քաթարեան դիւալ	410	412
Սեւտական դիւալ	398	400
Օմանեան դիւալ	3865	3890
Եգիպտական կիւնէ	270	280
Անգլիական սթերլին	2230	2240
Չուիցերիական ֆրանք	1318	1318
Թրքական լիրա	936	946
Ճափոնական ենէ	14,90	15,10
Ամերիկեան տոլար	1501	1514
Գանատական տոլար	1263	1273
Աւստրալիական տոլար	1095	1105
Եւրօ	1988	1998

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1,3330	1,3335
Գանատական տոլար	1,1775	1,1780
Չուիցերիական ֆրանք	1,1315	1,1320
Ճափոնական ենէ	99,45	99,50
Մէլ սթերլին	1,4950	1,4955

Մէլ տոլար 373 դրամ (հայկական)  
Սակարանը տրամադրեց լուծայափոխ  
Ալեքսանեան Եղբայրք Գե՛մ՝ 01-252852

## ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

5 ՄԱՅԻՄ  
1818՝ ծնաւ Քարլ Մարքսը:  
1821՝ մահացաւ Նափոլիոն Պոնափարթը:  
1930՝ Էմի Դոնսըն կը դառնայ Անգլիայէն Աւստրալիա առանձին բռնիք կատարող առաջին կինը:

## Ս.Գ.Ն.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ս.Գ.Ն.Կ. ընտրական կեդրոնական մարմինը կու գայ ձեռնարկեցնել, թէ յետ այսու իր Նոր Դաճնոյ եւ Անթիլիասի գրասենականները բաց են ընդունելու եւ ստուգելու ձեր ընտրական կարգավիճակը:

- Նոր Դաճնոյ գրասենական (01-444738) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 9:00-էն 8:00, Շաբաթ օրերը, ժամը 10:00-էն 5:00:

- Անթիլիասի գրասենական (04-522345) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 11:00-էն 4:00 բացի՝ Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ս.Գ.Ն.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

## Ազգ. Ռուբինեան-Սահակ Մետրոպեան Վարժարան

### ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝  
Հոգաբարձութեան

Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝  
ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ

Նուագի ընկերակցութեամբ հարաձանօթ արուեստագետ

Խաչիկ Մալխասեանի  
Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մայիս 2009, կէսօրուան ժամը 1:00-էն սկսեալ, «Նահր Ալ ժաննա» ճաշարանին մէջ, Նահր Էլ Զէլա:

## ՃԱՇԱՐԱՆ ՆԱՀՐ ԷԼ ՇԱՆՆԱ

(Տնօրէնութեամբ Յովհաննէս Փայասլեանի, Նախկին սեփականատէր ճաշարան ԱՂՎ-ի)

\* Հչեղ կահաւորում  
\* Մասնագիտացած անձնակազմ  
\* Համալսում եւ ճոխ արեւելեան ճաշացուցակ  
\* Ուսումնասիրուած սակագոյց  
\* Սրահը կը ներփակէ 350 անձ  
Կը ստանձնենք միութեանական, ընտանեկան եւ հարսանեկան խրախճանքներ, յատուկ սակացոյցով:  
Հասցէ. Նահր Էլ Զէլայի մուտքէն 2 քիլոմէթր ներս, հեռ. 04-930200 եւ 03-261275

## ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼԸ

Ընկ. ժազ Թիւթինճեան ընդ. Զրիսթին Օհանեան  
Պէլրուօ, 3 Մայիս 2009 Մեր Զերմ Շնորհատրութիւնները

### ԳՐԱՒՈՒԾ ՕՐ

15 Մայիս 2009, Երեկոյեան ժամը 8:00-ին  
ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈՒԷԾԻ «ԾԻՐԱՆԻ» ԵՐԳ-ՉԱԽՈՒՄԻ ԿՂԱՄԵՐԳ.

### ԳՐԱՒՈՒԾ ՕՐ

Հ.Մ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՅՐԵՐՈՒՄ ՕՐ 22 Մայիս 2009, ՄՏԵՐՄԻԿ ԵՐԵԿՈՅ 23 Մայիս 2009,

### ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Յարութիւն Արլանեանի մահուան տխուր առիթով, Նոր Դաճնոյ Ա. Գեորգ եկեղեցու թաղականութիւնը, տիկնանց միութիւնը եւ Գայիանէ երգչախումբը իրենց խորագգած ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալին ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, ի մասնաւորի տէր եւ տիկ. Վաչէ եւ Աստղիկ Արլանեաններուն:

### ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ընկ. ժազ Թիւթինճեանի ընդ Զրիսթին Օհանեանի պատկառութեան առիթով, Ս.Գ.Ն.Կ. «Աղասի» մասնաճիւղի վարչութիւնը, ՅՄՄ «Պէլրուօ»-ի վարչութիւնը, ՅՄՄ-ի «Սկաուտական Խորհուրդ»ը, ՅՄՄ-ի փողերախումբը կը շնորհաւորեն Նորապասկ ամուլը. ինչպէս նաեւ անոնց բոլոր ընտանեկան պարագաները:

## ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99  
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON  
Website: [www.araraddaily.org](http://www.araraddaily.org) e-mail: [ararad@terra.net.lb](mailto:ararad@terra.net.lb)  
صدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)  
المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان